# ԼՂՀ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՀՐԱԴԱԴԱՐԸ

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը իր գոհունակությունն է հայտնում այն առթիվ, որ հակամարտության բոլոր կողմերը պահպանում են 1994 թվականի հուլիսի 27-ին ԼՂՀ-ի, Ադրբեջանական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության ռազմական գերատեսչությունների ղեկավարների ստորագրած համաձայնագրով նախատեսված հրադադարը, հայտարարել է ԼՂՀ արտգործնախարարության մամլո ծառայությունը:

Մամլո ծառայությունից Արմենպրեսին հաղորդեցին նաեւ, որ ԼՂՀ-ի պաշտպանության բանակի հրամանատարի կողմից կրկին հավաստվել են բոլոր ստորաբաժանումներին տրված հրամանները. ձեռնպահ մնալ ամեն տեսակ գործողություններից, որոնք կարող են հանգեցնել հրադադարի ռեժիմի խախտմանը:

Հրամաններով նաեւ պատժամիջոցներ են նախատեսվում այն անձանց նկատմամբ, ովքեր կխախտեն հրադադարը:

ԼՂՀ արտգործնախարարությունը հույս է հայտնել, որ հրադադարը կպահպանվի ընդհուպ մինչեւ քաղաքական համաձայնագրի կնքումը:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ*